Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի ԹԻՎ ԹԻՎ 327-Ա-333-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ ԹԻՎ 334-Ա-336-Ա, 339-Ա-350-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 327-Ա որոշման վերնագրում և դրույթներում կիրառվել են հապավումով գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Որոշման նախաբանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանին կատարված հղումը ճիշտ չի գրառված: Անհրաժեշտ էր հղում կատարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետին:

Որոշմամբ հաստատված մրցութային հանձնաժողովի կազմը անհրաժեշտ էր ձևակերպել որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի ձևով: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի՝ իրավական ակտով հաստատվող ցանկերը և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին:

Որոշման բովանդակության մեջ համայնքի և համայնքապետարանի անվանումները թերի են գրառված: Անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի» բառերը:

Թիվ թիվ 328-330 որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի, 17-րդ հոդվածի 8-րդ մասի, 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, իսկ թիվ թիվ 331-Ա և 333-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին:

Թիվ թիվ 332-Ա և 334-Ա որոշումներում 4-րդ կետը թերի է գրառված:

Թիվ թիվ 333-Ա, 335-Ա և 342-Ա որոշումների բովանդակության մեջ գրառված չեն փոփոխվող իրավական ակտերի լրիվ անվանումները:

Թիվ թիվ 336-Ա, 339-Ա-341-Ա, 343-Ա-350-Ա որոշումների բովանդակությունների մեջ տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին:

Թիվ թիվ 339-Ա-341-Ա, 343-Ա-348-Ա որոշումների մեջ բացակայում են սեփականատիրոջ կամ իրավատիրոջ վերաբերյալ տեղեկությունները:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
13.06.2022թ.